Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/31Ն ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

Մեկնարկ՝ «29» «սեպտեմբերի» 2025թ.
ք. Երևան **ժամը՝ 12:30**
Ավարտ՝ «17» «հոկտեմբերի» 2025թ.
ժամը՝ 16:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)՝ Ն. Մնոյան

անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Աստղիկ Խաչատրյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Հրանտ Մինասյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Սիրանուշ Աբրահամյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Գևորգ Խեչումյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպչական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Ա. Բաղալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/31Ն ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/31Ն** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2025 թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 12:30-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/

1	**Մ-6, Վանաձոր (Մ-3 հատման կետ) – Ալավերդի - ՀՀ սահման (Բագրատաշեն) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ67+050 – կմ67+220 փլուզված հատվածի վերակառուցման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ**	**3 450 000**

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների), հասցեների /ՀՎՀՀ/ և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1 Հայտ է ներկայացվել հետևյալ մասնակցի կողմից.

N	Մասնակիցների անվանումները	Հասցե/ ՀՎՀՀ	Էլ. փոստ
1	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ /ՀՎՀՀ 00813453/	lilit.poghosyan@dorproject.am lil.poghosyan17@gmail.com

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված էր հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

5.1 Ընթացակարգի հրավերի պայմաններին բավարարող և բավարար գնահատված գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Չափաբաժին 1

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	2 500 000	500 000	3 000 000

5.2 Մասնակցի հայտի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում է (ճիշտ է):

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/31Ն ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

6.1 **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/31Ն** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած /ընտրված / մասնակից ճանաչել «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ին:

6.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

6.3 **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2025/31Ն** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի /սույն ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետ չի կիրառվում/ և 36-րդ հոդվածների պահանջները:

7. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Աստղիկ Խաչատրյան**	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Սիրանուշ Աբրահամյան	.....
	Գևորգ Խեչումյան	.....
Քարտուղար՝	**Անի Բաղալյան**	.....